# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14

վիճակագրության պետական խորհրդի նիստի

---

26.10.2011թ. ժ.11: 00

**Մասնակցում էին՝**

Ս.Մնացականյան (Խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ա.Աղազարյան, Ս.Դավթյան (Խորհրդի անդամներ)

**Հրավիրված էին՝** Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ջ. Միրզոյան (նախագահի խորհրդական), Ա.Սաֆյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ), Լ.Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Գ. Մարտիրոսյան (գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ), Ռ.Հովհաննիսյան (մարդահամարի վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման բաժնի պետ), Գ.Սարգսյան, (բիզնես ռեգիստրի բաժնի գլխավոր մասնագետ), Գ.Սարգսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ), Մ.Ծատուրյան (սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ), Ա. Հարությունյան (առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ), Լ.Հարությունյան (բիզնես ռեգիստրի բաժնի պետ):

Օրակարգի նախագծում ՝ վեց հարց.

1. «Վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը» և «Վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթի լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Գ.Խաչատրյան/*

2. «Ըստ նպատակների անհատական սպառման դասակարգման (COICOP) նախագիծը հաստատելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Գ.Սարգսյան/*

3. «Մասնավոր հատվածի կազմակերպությունների շրջանակում ՀՀ կազմակերպությունների բիզնես ռեգիստրի հետազոտություն իրականացնելու մասին փոխըմբռնման հուշագրին հավանություն տալու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Լ.Պետրոսյան/*

4. «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների գործունեության մասին» Ձև թիվ 7 (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի մայիսի 17-ի թիվ 07 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»,
«Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Տնեմարանում հաշվառված հաշմանդամության մասին» Ձև թիվ 1 (կիսամյակային) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի մայիսի 17-ի թիվ 08 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Մ.Ծատուրյան/*

5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.
5.1. Հաղորդում՝ Դանիայի Կոպենհագեն քաղաքում 2011 թվականի օգոստոսի 29-ից սեպտեմբերի 2-ը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո Թվինինգ ծրագրի «Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը» պայմանագրի «Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հանրության վիճակագրություն» (ՏՀՏ) Բաղադրիչի շրջանակում ուսուցողական հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցողներ՝ Գ. Անանյան, Ա. Հարությունյան, Ի. Բարոյան/*
5.2. Հաղորդում՝ Մոլդովայի Քիշինև քաղաքում 2011 թվականի սեպտեմբերի 19-ից 20-ը ԱՊՀ վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 46-րդ նիստին և «Ազգային վիճակագրական համակարգերի ռազմավարական զարգացման և կառավարման հիմնախնդիրները» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցողներ՝ Լ.Միրզոյան, Ա.Սաֆյան/*

5.3. Հաղորդում՝ Թաիլանդի Բանգկոկ քաղաքում 2011 թվականի սեպտեմբերի 20-ից 23-ը ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան երկրների տնտեսական և սոցիալական հարցերով հանձնաժողովի (UNESCAP) վիճակագրության բաժնի կողմից կազմակերպված «Մարդահամարի տվյալների օգտագործմամբ ոչ ագրեգացված վիճակագրական տվյալների ստացման մոտեցումները և մեթոդները» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցողներ՝ Լ.Հարությունյան, Ռ.Հովհաննիսյան/*
5.4. Հաղորդում՝ Թուրքիայի Ստամբուլ քաղաքում 2011 թվականի հոկտեմբերի 10-ից 13-ը ՄԱԿ-ի Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովի կողմից կազմակերպված «Սպառողական գների ինդեքս» թեմայով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցող՝ Գ.Մարտիրոսյան/*
5.5. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2011 թվականի հոկտեմբերի 18-ից 21-ը ՄԱԿ-ի ԵՏՀ Էկոլոգիական քաղաքականության կոմիտեի ու Եվրոպայի վիճակագիրների կողմից համատեղ կազմակերպած Էկոլոգիական ցուցանիշների ներդրմանն ու օգտագործմանը նվիրված Եվրոմիության, Արևելյան Եվրոպայի, Կովկասի եւ Միջին Ասիայի երկրների բնապահպանների և վիճակագիրների միասնական նպատակային խմբի և բնապահպանների աշխատանքային խմբի խորհրդակցություններին մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցող՝ ՅՈՒ.Պողոսյան/*

6. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:
/Քվեարկության արդյունքները-կողմ՝6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

**Լսեցին՝**
1. «Վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը» և «Վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթի լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Գ.Խաչատրյան/*
**Որոշեցին՝**
հաստատել «Վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը»՝ համաձայն հավելված 1-ի և «Վիճակագրական բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթի լրացման հրահանգը»՝ համաձայն հավելված 2-ի:
*/Նորմատիվ/*
*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**
2. «Ըստ նպատակների անհատական սպառման դասակարգման (COICOP) նախագիծը հաստատելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Գ.Սարգսյան/*
**Որոշեցին՝**
հաստատել «Ըստ նպատակների անհատական սպառման դասակարգումը», «Ըստ նպատակների անհատական սպառման դասակարգումը յոթանիշ մակարդակով»՝ համաձայն հավելվածների և ուժը կորցրած ճանաչել ՀՀ ՎՊԽ 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Անհատական սպառում ըստ նպատակների» վիճակագրական դասակարգիչը հաստատելու մասինե թիվ 30-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը:
*/Անհատական/*
*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**
3. «Մասնավոր հատվածի կազմակերպությունների շրջանակում ՀՀ կազմակերպությունների բիզնես ռեգիստրի հետազոտություն իրականացնելու մասին փոխըմբռնման հուշագրին հավանություն տալու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Լ.Պետրոսյան/*

**Որոշեցին՝**
հաստատել «Մասնավոր հատվածի կազմակերպությունների շրջանակում ՀՀ կազմակերպությունների բիզնես ռեգիստրի հետազոտություն իրականացնելու մասին փոխըմբռնման հուշագիրը»՝ համաձայն հավելվածի:
*/Անհատական/*
*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**
**4.** «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների գործունեության մասին» Ձև թիվ 7 (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի մայիսի 17-ի թիվ 07 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»,
«Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Ծտեմարանում հաշվառված հաշմանդամության մասին» Ձև թիվ 1 (կիսամյակային) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի մայիսի 17-ի թիվ 08 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Մ.Ծատուրյան/* ձևին
**Որոշեցին՝**
հավանություն տալ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների գործունեության մասին» Ձև թիվ 7 (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվությանը և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Ծտեմարանում հաշվառված հաշմանդամության մասին» Ձև թիվ 1 (կիսամյակային) վարչական վիճակագրական հաշվետվության ձևերին, ինչպես նաև ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի մայիսի 17-ի «Ձև թիվ 1-հաշմանդամություն «Բնակչության հաշմանդամության մասին» վարչական վիճակագրական հաշվետվային ձևին հավանություն տալու մասին» թիվ 08 արձանագրային որոշմ և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի մայիսի 17-ի «Ձև թիվ 7 «Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների գործունեության վերաբերյալ» վարչական վիճակագրական հաշվետվային ձևին հավանություն տալու մասին» թիվ 07 արձանագրային որոշումը:
*/Անհատական/*
*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**
5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.
5.1. Հաղորդում՝ Դանիայի Կոպենհագեն քաղաքում 2011 թվականի օգոստոսի 29-ից սեպտեմբերի 2-ը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո Թվինինգ ծրագրի «Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը» պայմանագրի «Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հանրության վիճակագրություն» (ՏՀՏ) Բաղադրիչի շրջանակում ուսուցողական հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցողներ՝ Գ. Անանյան, Ա. Հարությունյան, Ի. Բարոյան/*
5.2. Հաղորդում՝ Մոլդովայի Քիշինև քաղաքում 2011 թվականի սեպտեմբերի 19-ից 20-ը ԱՊՀ վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 46-րդ նիստին և «Ազգային վիճակագրական համակարգերի ռազմավարական զարգացման և կառավարման հիմնախնդիրները» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցողներ՝ Լ.Միրզոյան, Ա.Սաֆյան/*
5.3. Հաղորդում՝ Թաիլանդի Բանգկոկ քաղաքում 2011 թվականի սեպտեմբերի 20-ից 23-ը ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան երկրների տնտեսական և սոցիալական հարցերով հանձնաժողովի (UNESCAP) վիճակագրության բաժնի կողմից կազմակերպված «Մարդահամարի տվյալների օգտագործմամբ ոչ ագրեգացված վիճակագրական տվյալների ստացման մոտեցումները և մեթոդները» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցողներ՝ Լ.Հարությունյան, Ռ.Հովհաննիսյան/*

5.4. Հաղորդում՝ Թուրքիայի Ստամբուլ քաղաքում 2011 թվականի հոկտեմբերի 10-ից 13-ը ՄԱԿ-ի Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովի կողմից կազմակերպված «Սպառողական գների ինդեքս» թեմայով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Գ.Մարտիրոսյան/*

5.5. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2011 թվականի հոկտեմբերի 18-ից 21-ը ՄԱԿ-ի ԵՏՀ Էկոլոգիական քաղաքականության կոմիտեի ու Եվրոպայի վիճակագիրների կողմից համատեղ կազմակերպած Էկոլոգիական ցուցանիշների ներդրմանն ու օգտագործմանը նվիրված Եվրոմիության, Արևելյան Եվրոպայի, Կովկասի եւ Միջին Ասիայի երկրների բնապահպանների և վիճակագիրների միասնական նպատակային խմբի և բնապահպանների աշխատանքային խմբի խորհրդակցություններին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ ՅՈՒ.Պողոսյան/*

**Որոշեցին՝**

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ